ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

Ազգային փոքրամասնությունների հարցերով խորհրդի նիստի

(4 մարտի, 2022 թվական)

Նիստը վարեց ՀՀ վարչապետի խորհրդական և Ազգային փոքրամասնությունների հարցերով խորհրդի նախագահ Ա. Թումանյանը: Նիստին ներկա էին Խորհրդի նախագահի տեղակալ Վ. Ասցատրյանը, քարտուղար Ն. Գուլյանը և Խորհրդի ներքոհիշյալ անդամները.

Ի. Գասպարյան, Ա. Միխայլով, Ա. Հարությունյան, Ե. Հակոբյան, Ս. Նամչևաձե, Ն. Սպանդերաշվիլի, Խ. Հաջոյան, Ս. Ավդալյան, Վ. Վուխրեր, Մ. Մինասյան, Ի. Պողոսյան, Մ. Սիմոնյան, Մ. Լազարևա, Է. Պողոսյան, Ռ. Վարժապետյան, Վ. Վայներ, Ան. Հարությունյան, Ա. Մինասյան, Կ. Հասանով, Ի. Կոնցեվիչ:

ՕՐԱԿԱՐԳ.

1. «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով ազգային փոքրամասնությունների համար նախատեսված 20 մլն դրամի բաշխման մասին:
2. Դրամաշնորհային ծրագրերի (ներառյալ՝ Խորհրդի միասնական միջոցառման ծրագիրը) ներկայացման պայմանների մասին:

Մինչ օրակարգային հարցերին անդրադառնալը՝ Ա. Թումանյանն առաջարկեց Խորհրդի անդամներին ներկայացնել համայնքների առջև ծառացած հրատապ խնդիրները:

Խորհրդի անդամների ներկայացրած խնդիրների շարքում համայնքներին առնչվող հիմնական հարցերն էին.

- Ազգային փոքրամասնությունների մասին օրենքի նախագծում որոշակի փոփոխությունների անհրաժեշտություն:
- Մասնագիտական կրթություն ունեցող մանկավարժների և անհրաժեշտ դասագրքերի պակաս:
- Ազգային փոքրամասնությունների կենտրոնի տեխնիկական հագեցվածության անբավարար մակարդակ:
- Առանձին համայնքները ներկայացնող ՀԿ-երի վարձակալած տարածքների ժամկետանց պայմանագրերի երկարացման անհրաժեշտություն:
- Պետական բյուջեից հատկացվող գումարների ծավալները մեծացնելու անհրաժեշտություն:
- «Ազգությունների տուն» հիմնադրելու անհրաժեշտություն:

Ա. Թումանյանն առաջարկեց պետական բյուջեով ազգային փոքրամասնություններին 2022 թվականի համար նախատեսված 20 մլն ՀՀ դրամ գումարի բաշխման եղանակը թողնել նույնը. այն է՝ 10 մլն ՀՀ դրամը հավասարապես բաշխել Խորհրդի 11 ազգային համայնքները ներկայացնող կազմակերպությունների միջև՝ ընթացիկ ծրագրերի իրականացման նպատակով, իսկ մնացած գումարն օգտագործել ազգային փոքրամասնությունները ներկայացնող ՀԿ-երի (նաև Խորհրդի անդամ չհանդիսացող) դրամաշնորհային ծրագրերի իրականացման համար:

Ա. Թումանյանը նաև առաջարկեց Խորհրդի անդամներին 10-օրյա ժամկետում ներկայացնել դրամաշնորհային ծրագրեր՝ համապատասխան նախահաշիվներով:

Որոշումներն ընդունվեցին միաձայն:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԹՈՒՄԱՆՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ն. ԳՈՒԼՅԱՆ